աղօթելով. նոքա միախառն միասին չէին ընակում, այլ ցանուցիր ամբողջ սարի ստորոտում զանազան կայաններ ունէին և ամէն մէկն իւր աշխատանքով հոգում էր իւր մարմնաւոր պէտքերը. ես նոցա օրհնութիւնն առնելով, գնացի Թորդան գիւղն «ի տեղի զբօսանաց պարտիզկանն սրբոյն Գրիգորի» որի մէջ իմաստութեան և անմահութեան գանձերն են պահուած, «այսինքն կենդանի ոսկերք սրբոցն». այնտեղ գիշերելով և ուխտս կատարելով, կարեցի մի կտոր այն հացի ծառից, որ Ս. Լուսաւորիչն էր տնկել իւր ձեռքով. ապա դարձեալ գնացի դէպի սարը և վանքերի մէջ մնացի ինն ամսի չափ։»

Դրասխանակերտցի կաթուղիկոսի այս այցելութիւնից գրեթէ չորս հարիւր տարի յետոյ ջերմ ոգեւորութեամբ դրուատեց Սեպուհի և նորա սրբավայրերի յիշատակը Երզնկացին Յովհան, հայրենասիրական պարծանք համարելով իրեն համար, որ Ս. Լուսաւորիչ ապրել և գործել է իւր Յովհանի ծննդավայրում. Երզնկացին, ի թիւս այլոց, յիշում է այն երկու աղբիւրները, որոնք Ս. Լուսաւորչի աղօթքով նոր ընութիւն վաստակեցին. նոցանից մէկը կոյրին տեսութիւն տալու զօրութիւն ստացաւ և կոչուեցաւ Լուսոյ աղբիւր, միւսն իւր աղի համը փոխեց և կոչուեցաւ բարեհամ, նա յիշում է ս. Տրդատ արքայի հալւունի թուրը, որ խաչանիշ փայլում է Սեպուհի գլխին օդի մէջ. ըստ